Հ. Ն. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՊԱՐԵՆԱՅԻՆ ՀԱՐՑԸ ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՅՈՒՄ

Բաքվի կոմունան ներքին և արտաքին տնտեսական ու քաղաքական բարդությունների մի խճճված հանգույց էր։ Այդ հանգույցը լուծելու, նավթաշխարհի պրոլետարիատի պայքարը դեպի իր հաղթական ելքը տանելու գործում վճռական դեր ուներ քաղաքի ու նրա շրջանների պարենային դրությունը։ Վերջինիս նպաստավորությունը, լինելով Բաքվի պրոլետարիատի հաղթանակի համար անհրաժեշտ ներքին գործոններից մեկը, իր հերթին հիմնականում պայմանավորված էր կոմունայի արտաքին դրությամբ, նրա արտաքին տնտեսական և քաղաքական կապերով։ Թե՛ մեկի, թե՛ մյուսի հետագա պատմագիտական ուսումնասիրումը կնպաստի կոմունայի պատմության, մասնավորապես նրա պարտության պատճառների ավելի լրիվ ու ճշգրիտ լուսաբանմանը։ Այդ տեսակետից հետաքրքիր նյութ է ընձեռում Բաքվի պարենային հաստատությունների և նրանցում աշխատած բոլշևիկ գործիչների գործունեության ուսումնասիրությունը։ Այդ գործիչների թվին են պատկանում Ալեքսանդր Միտրոֆոնովիչ Ստոպանին, Ալեքսանդր Հարությունի Բեկզադյանը և ուրիշներ։ Ա. Հ. Բեկզադյանը 1915 թվականից աշխատում էր Բաքվի նահանգային պարենային կոմիտեում որպես նրա նախագահ Ա. Մ. Ստոպանու տեղակալ։

Նահանգային պարենային կոմիտեն (կոչվում էր նաև վարչություն) նահանգի ամենակարևոր հիմնարկություններից մեկն էր, որտեղ բախվում էին քաղաքի ու նահանգի բոլոր հասարակական խավերի շահերը։ Հացի խնդիրը դառնում էր ամենասուրն ու ամենակենսականը։

Պարենային վարչությունում Ստոպանին մինչև 1917-ի աշունը մնաց նախագահ, իսկ Բեկզադյանը՝ նրա տեղակալ։ Հետո, երբ Ստոպանին աշխատանքի անցավ Թերեքի նորաստեղծ հանրապետությունում, Բեկզադյանը կարճ ժամանակ անց փոխարինեց նրան։ Բաքվում սովետական իշխանության հաղթանակից հետո՝ 1918-ի ապրիլին, Բեկզադյանը նշանակվեց հացի մթերման գծով Բաքվի ժողկոմխորհի հատուկ լիազոր Հյուսիսային Կովկասում և այդ պահից մինչև 1918-ի վերջը աշխատեց այնտեղ։

1. 1917 ԹՎԱԿԱՆ (ՓԵՏՐՎԱՐԻՑ-ՀՈԿՏԵՄԲԵՐ)

Բաքվի և առհասարակ ամբողջ երկրի պարենային դրությունը չափազանց անմխիթարական էր ինքնակալության խորտակման պահին։ Հացի պահեստները դատարկվում էին։ Գյուղացիությունը խիստ դժգոհ էր հացի գների նկատմամբ ժամանակավոր կառավարության վարած քաղաքականությունից։ Նա հացը վաճառքի չէր հանում։ 1917 թվականի ամռանը Բաքվում նախորդ տարվա նույն ժամանակամիջոցի համեմատ հացի կեսն էլ չէր ստացվում։ Ան-

համեմատ քիչ էր ստացվում թեյ, ձու և ուրիշ այլ սննդամթերքներ։ Իսկ օգոստոսին քաղաքում բոլորովին շաքար չկար։ Օգոստոսի կեսերին քաղաքում եղած հացի պաշարը բնակչությանը կբավարարեր միայն հինգ օր, իսկ օրական ստացվում էր պահանջվածի մեկ հինգերորդից ոչ ավելին[1]։ Բաքվում հացի ճգնաժամ էր, որին հետևում էին անիշխանությունն ու սպեկուլյացիան, գողությունն ու հափշտակումները։

Օգոստոսին Բաքվի սովետի գործադիր կոմիտեի, նահանգային և քաղաքային պարենային կոմիտեների և քաղաքական կուսակցությունների ներկայացուցիչների համատեղ նիստը որոշեց հացի ռացիոնը կրճատել մեկ քառորդով։ Միաժամանակ որոշվեց քաղաքում եղած հացի պաշարների չափը պարզելու համար անցկացնել խուզարկություններ պահեստային շենքերում և դիմել քաղաքի բնակչությանը հացի պակասի պատճառով կարգապահությունը չխախտելու կոչով[2]։

Արդեն երրորդ տարին էր, որ Բաքվի պրոլետարիատը տառապում էր թանկության և սննդամթերքների պակասի հետևանքով։ Հացը դարձել էր բանվորների քաղաքական կռվի կարևոր լոզունգներից մեկը։ Հացի պակասը բուրժուազիայի ձեռքին դարձել էր բանվորներին լռեցնելու և ահաբեկելու միջոց։ Գործարանատերերն ու շտրեյկբրեխերները, գործադուլների ժամանակ, հայտարարում էին, որ գործադուլավորներին հաց չի տրվի։

Բաքվի քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրն աշխատում էր հացի նկատմամբ իր քաղաքականությունը մշակել, ունենալ իր առաջարկների հստակ պլանը, հացի քաղաքականությամբ իր ընդհանուր քաղաքականությունն առաջ տանել։

Բայց եթե բուրժուական ու մանրբուրժուական կուսակցություններին կարող էր շահագրգռել հացի խնդիրը, պրոլետարական կուսակցությանը այն առավել քան պետք է շահագրգռեր և հուզեր։ Ավելորդ է ասել, որ պրոլետարիատը ամենակարիքավոր դասակարգն էր և ամենից շատ նա ուներ հացի պահանջ։

Պրոլետարիատի քաղաքական կուսակցությունը պայքարում էր սովի խորացման դեմ, դիմում հնարավոր միջոցների՝ պարենային հարցը բարելավելու, սննդամթերքների բաշխումը կարգավորելու համար։ Թեև սովը կարող էր ամենալուրջ հեղափոխական ցնցումների հանգեցնել, բայց և այնպես սոված մարդկանցով տևական հեղափոխություն անել, առավել ևս նրա հաղթանակը հաստատուն դարձնել հնարավոր չէր։

Այստեղ մենք մոտենում ենք այն խնդրի պարզաբանմանը, թե ինչու բուրժուական կարգերի պայմաններում, երբ իշխանության գլուխ կանգնած էր բուրժուական ժամանակավոր կառավարությունը, բոլշևիկների կուսակցության անդամներ Ստոպանին և Բեկզադյանը Բաքվում ղեկավարում էին ամենասովորական բուրժուական հիմնարկներից մեկը՝ նահանգային պարենային վարչությունը։

Այդ վարչությունը ղեկավարում էր նահանգի ողջ պարենային գործը։ Նա էր կազմակերպում սննդամթերքների, այդ թվում հացամթերքների ստացումն

---

1 Տե՛ս «Известия Совета рабочих и военных депутатов Бакинского района» (այսուհետև՝ «Известия...»), № 114, 19-го августа 1917 г.

2 Նույն տեղում։

ու բաշխումը քաղաքում և նահանգում։ Վարչությունում բոլշևիկների աշխատանքի հաջողությունը նախ կնպաստեր բոլշևիկների կուսակցության ազդեցության ուժեղացմանը մասսաների ավելի ու ավելի լայն խավերում։ Այն կնպաստեր նաև պրոլետարիատի ու քաղաքի մյուս աշխատավորական խավերի պարենային դրության եթե ոչ բարելավմանը, ապա առնվազն կարգավորմանը, որն ինքնին խոշոր դեր կխաղար նրանց պայքարը անվարան շարունակելու համար։ Եվ եթե բուրժուական և մյուս քաղաքական կուսակցությունների գործիչները ողջամիտ քայլեր էին անում քաղաքում և նահանգում բնակչության պարենային դրությունը կարգավորելու ուղղությամբ, ապա առաջինը Ստոպանին և Բեկզադյանն էին օժանդակում նրանց։ Հարց է ծագում՝ իսկ ի՞նչ էին անում Ստոպանին և Բեկզադյանը, երբ տեսնում էին, որ բուրժուական և այլ կուսակցությունների ներկայացուցիչները սխալ կամ բացահայտ թշնամական քայլեր էին կատարում։ Նախքան նրանց այդ գործերը ագիտացիոն նպատակներով օգտագործելը, նախքան քննադատության, բարոյական վարկաբեկման նյութ դարձնելը, նրանք աշխատում էին սխալն ուղղել, հացի և սննդամթերքների ստացումն ու բաշխումը կարգավորել։ Մենք հետո կտեսնենք, թե ինչպես, երբ քաղաքում արդեն սովետական իշխանություն էր հաստատված, պարենային վարչության մյուս աշխատողները, քաղաքական թշնամանքից դրբդված, խորացնում էին պարենային դժվարությունները, սաբոտաժի էին դիմում և ձախողում հացահատիկի ու մյուս սննդամթերքների մատակարարման գործը։ Բոլշևիկները պայքարում էին բուրժուական հասարակական կարգերի դեմ, որոնք ինքնին այնքան շատ նյութ էին տալիս հակառակորդին մերկացնելու, հասարակության լայն խավերի առաջ նրա սնանկությունը ցույց տալու համար, որ թշնամու «ժամանակավոր անհաջողությունը» (տվյալ դեպքում պարենամթերքների պակասն ու սովը) նրանք չէին չարաշահում և նենգամտորեն ծառայեցնում իրենց գործին։ Ավելին. նրանք իրենց անձնական մասնակցությամբ աշխատում էին հաղթահարել այդ դժվարությունը։ Վկայակոչելով 1917-ի այս օրերը, 1918 թվականի մայիսի 12-ին Ստ. Շահումյանն ասում էր. «Անցյալում, երբ պարենային վարչությունները մեր հակառակորդների ձեռքում էին գրտնվում, երբ այնտեղ նստած էին քաղաքի ներկայացուցիչները մելնիկովների, լունևների, յակոբսոնների ու մյուսների հետ միասին, թող որևէ մեկն ասի, որ մենք մասսաներին գրգռում էինք նրանց դեմ։ Ընդհակառակը, մենք ամենաեռանդուն աջակցություն էինք ցույց տալիս նրանց, պատասխանատվություն ստանձնելով նրանց փոխարեն նույնիսկ ա՛յն ժամանակ, երբ նրանք երբեք արժանի չէին դրան»[3]։

Ստոպանու, Բեկզադյանի ու նրանց աջակցողների եռանդուն գործունեության հետևանքով պարենային ճգնաժամը 1917-ի գարնանն ու ամռանը որոշ չափով քաղաքում թուլացավ, հաստատվեց կարգ ու կանոն, թեև այդ էլ շատ հեռու էր բավարար լինելուց։ Նրանք կարողացան որոշ չափով բարելավել Հյուսիսային Կովկասից հացահատիկի տեղափոխման գործը, ուժեղացրին հսկողությունը հացահատիկի և մյուս սննդամթերքների բաշխման գործում, հաստատեցին խնայողական ռեժիմ։ Հետագայում Ստոպանին անդրադառնալով իրենց այդ աշխատանքին, նշել է, թե ինչպես կարճ ժամանակում ոչ միայն կենտրոնում, այլև գավառներում ստեղծվեց պարենային կոմիտեի ապարա-

3 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, Երևան, 1958, էջ 170։

տր[4]։ Ստոպանին նշել է, որ վերջինիս կազմում բացառապես բոլշևիկներ էին կամ նրանց մոտիկ կոոպերատորներ, ավելացնելով, որ իր «մերձավոր օգնականը (նահանգային պարենային վարչության նախագահի տեղակալը) Ալ. Բեկզադյանն էր»։ Պարենային գծով ղեկավար աշխատանք էին կատարում նաև կուսակցության հնագույն անդամներ Ի. Ֆ. Ստուրուան, Մ. Գ. Մուսաբեկովը և ուրիշներ[5]։

Ինչպես պատմում է Ա. Մ. Ստոպանին, իր ձեռնարկած միջոցառումների շնորհիվ Բաքվի պարենային նահանգային վարչությունը դառնում է Կովկասի երկրային պարենային կենտրոնից փաստորեն անկախ և ինքնուրույն։ Նա հայտարարում է հացի իր մենաշնորհը նահանգում, ստեղծում է գործակատարների ու գրասենյակների իր ցանցը։ Նա նույնիսկ ուներ իր ռազմական պաշտպանական ջոկատը և տրանսպորտը։ Հյուսիսային Կովկասից հացամթերքների փոխադրումը դրվում էր վարչության հսկողության տակ, իսկ տեղում անց էր կացվում հացամթերքների եղած պաշարների հաշվառք։ Վարչությունը իր հատուկ կոմիսարները նշանակում էր բոլոր նավահանգիստներում և երկաթուղային կայարաններում։ Նրանց առաջնահերթ խնդիրն էր՝ կանխել ապօրինի գործողությունները։ Ստոպանին նշում է, որ ինքը և Բեկզադյանը հաշվետու էին միայն Բաքվի սովետի և բոլշևիկյան կոմիտեի առջև[6]։

Ստոպանին և Բեկզադյանը հաճախ էին լինում տեղերում, հետաքրքրվում գործերի վիճակով, քննարկում ստացված դիմումները ու բողոքները։ Պարենային կոմիտեում նամակներ էին ստացվում, որտեղ բնակչությունը պատմում էր իր վիճակի մասին, առաջարկներ անում։ 1917 թ. մայիսի 14-ի նիստում Ստոպանին հրապարակում է Սալյանիից ստացված մի նամակ, որում հաղորդվում էր, թե «ինչպես են տեղական հարուստները շահագործում աշխատավորներին»[7]։ Նամակի հիման վրա Ստոպանին տեղեկացնում է, որ Ջևատի գավառի մի քանի գյուղերում հարուստները ցորենի և գարու ահռելի պաշարներ ունեն, որոնք թաքցնում են սովյալներից։ Գյուղացիները պահանջում են, որ պարենային կոմիտեն հանձնաժողով ուղարկի և կարգավորի հացի գործը։

Դրությունն ավելի լավ չէր Ղուբայի և Գեոկչայի գավառներում։ Ոստիկանական կատարածներից մինչև անտառային հսկիչները հացահատիկը թաքցնում էին, դուրս տանում գավառից, բնակչության մեծ մասին մատնելով սովի։ Խարանում էր սպեկուլյացիան։

Նահանգային պարենային վարչությունը 1917 թ. հունիսի 15-ին, հատուկ հանձնարարությամբ, Բաքվի գավառներն է ուղարկում ականավոր բոլշևիկ Մեշադի-բեկ Ագիզբեկովին, նրա վրա պարտավորություն դնելով տեղերի պարենային դրության, ինչպես նաև պարենային կոմիտեների գործունեության ստուգումը։ Վկայականը, որն ստորագրել էր Բաքվի նահանգային պարենային վարչության նախագահ Ստոպանին, հանձնարարում էր բոլոր անձանց և հիմնարկություններին, երկաթուղային կայարանների և միլիցիայի պետերին՝

---

4 А. Стопани, Из прошлого нашей партии (1904—1908 гг.), Из прошлого, Баку, 1923 г.

5 Նույն տեղում։

6 Նույն տեղում։

7 Տե՛ս «Баку», № 107, 17-ը մայիսի 1917 թ.։

ամենայն օժանդակություն ցույց տալ Մ. Ազիզբեկովին[8]։ Նահանգի գավառներն ու գյուղերն են ուղարկվում նաև ուրիշ գործիչներ։

Բայց միևնույնն էր. ինչ էլ արվեր տեղում, հացը բերվելու էր Հյուսիսային Կովկասից։ Ստոպանին ստիպված էր մեկնել Հյուսիսային Կովկաս։ Իսկ այնտեղ գյուղացիները հրաժարվում էին հաց վաճառել։ Վերադառնալով Հյուսիսային Կովկասից, օգոստոսի 19-ին Բաքվի սովետի նիստում նա զեկուցեց դրության մասին և ծանր վիճակից դուրս գալու համար վճռական միջոցների խնդիր դրեց։

Անընդհատ ծանրացող պարենային դրությունը և քաղաքում սրվող հացի ճգնաժամը անբարենպաստ վիճակ են ստեղծում պարենային վարչության համար։ Թշնամիները նրա գործունեության, հատկապես բոլշևիկ գործիչների շուրջը կեղծ լուրեր էին տարածում, աշխատում վարկաբեկել նրանց։ Օգոստոսի կեսերին Բաքվի սովետի անունով ստացվում է անստորագիր նամակ, որում անվստահություն էր հայտնվում պարենային կազմակերպությունների նկատմամբ։ Պարենային վարչության ներկայացուցիչ Բեկզադյանը սովետի նիստում մերկացնում է նման փորձերը և պահանջում, որ այդ հարցը քննության դրվի։ Բեկզադյանի պահանջը հարգվում է, և առանց մտքերի փոխանակության սովետը վստահում է պարենային կազմակերպություններին[9]։

2. 1917-Ի ՀՈԿՏԵՄԲԵՐԻՑ 1918-Ի ՄԱՐՏ

Հոկտեմբերյան հաղթանակի պահին երկրի պարենային դրությունը մնում էր ավելի քան կրիտիկական։ Համենայն դեպս, մինչ այդ (փետրվարից հոկտեմբեր) վիճակը անհամեմատ մխիթարական էր, քան հոկտեմբերից հետո։ Ուստի բնական է, որ հեղափոխության հաղթանակից հետո «հաց» և «խաղաղություն» լոզունգները օրակարգից դուրս չեկան։ Դեկտեմբերին Վ. Ի. Լենինն ասում էր, թե այդ ամսին, մյուս բոլոր քաղաքական հարցերից առաջ, երկու հարց է մղվել առաջին պլան. հացինն ու խաղաղությանը[10]։

Հեղափոխությունը կատարվեց բերքահավաքը ավարտելու, բերքը պահեստներում կուտակելու և բաշխելու վճռական ժամին։ Գյուղի հարուստ վերնախավը որևէ շահագրգռություն հանդես չէր բերում քաղաքներին հացով ապահովելու գործում։

Բաքվում հացի պակասը հաճախ էր մարդկանց համբերությունից հանում։ Հոկտեմբերը, ճիշտ է, հուսադրեց բանվորներին, քաջալերեց նրանց, բայց, ցավոք, իր հետ անմիջապես հաց չբերեց։ Մարդիկ խմբերով գալիս էին նահանգային պարենային վարչություն և հաց պահանջում։ Նրանց ընդունում էր մեծ մասամբ Բեկզադյանը։ Ստոպանին այդ ժամանակ Թերեքի սովետական հանրապետության ժողկոմն էր։ Նրան մինչև դեկտեմբեր ի պաշտոնե փոխարինեց Էսեռ Մելնիկովը, բայց արդեն դեկտեմբերին Բեկզադյանն էր վարչության նախագահը, իսկ տեղակալը՝ բոլշևիկ Գ. Մուսաբեկովը։

Բեկզադյանի համար հեշտ չէր համոզիչ խոսք գտնել։ Սոված մարդիկ հաց էին պահանջում։ Բաքվի սովետի գործադիր կոմիտեն և քաղաքային դուման

8 Տե՛ս Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане, документы и материалы (1917—1918 гг.), Баку, 1957 г. (այսուհետև՝ Большевики...), стр. 32—33.

9 Տե՛ս «Известия...», № 117, 23-ը օգոստոսի 1917 թ.։

10 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 26, էջ 474։

իրենց նիստերում մեծ բանավեճեր էին սարքում պարենային հարցի շուրջը։ Բեկզադյանը հանդես էր գալիս զեկուցումներով, հրապարակում էր թվեր։ Բայց դրանից վիճակը չէր փոխվում։ Այդպես քաղաքային դումայի դեկտեմբերի 1-ի նիստում Բեկզադյանը ասաց, որ հարցը վճռում է Հյուսիսային Կովկասը, որն ունի 150 միլիոն փութ հացի ավելցուկ, և բանակին, Թուրքեստանին, Անդրկովկասին և մասամբ նաև Մոսկվային մատակարարելուց բացի Հյուսիսային Կովկասը կարող է մատակարարել նաև Բաքվին։ Բայց իրականում տրանսպորտի քայքայումը, անիշխանությունն ու գյուղացիության բարոյալքումը անհնար էին դարձնում հացի մատակարարումը։ Թերեքի մարզում պայթեցված էին կամուրջները, քանդված էր երկաթուղագիծը։ Մինչդեռ քաղաքի և հանքերի կարիքները բավարարելու համար անհրաժեշտ էր վեց ու կես միլիոն փութ ալյուր կամ 8 միլիոն փութ ցորեն։ Պարենային վարչությունը դժվարանում էր ելք գտնել, որովհետև նա սոսկ բաշխող մարմին էր։ Եթե ալյուր ու հացահատիկ չէր ստացվում, նրան փաստորեն անելիք չէր մնում։ Եվ Բեկզադյանի առաջարկներն էլ հենց վերաբերում էին բաշխման ոլորտին. պակասեցնել ռացիոնը, գյուղական վայրերում մտցնել քարտային սիստեմ, միջոցներ ձեռք առնել երկաթուղային տրանսպորտի վիճակը և ծովով բեռների փոխադրման գործը բարելավելու համար[11]։

Հանքերի ու գործարանների բանվորները որոշում էին աշխատել, որպեսզի Հյուսիսային Կովկասին նավթ տրվի, փոխարենը հաց ստանալու համար։

Գրեթե ամեն օր մամուլում հրապարակվում էին տվյալներ քաղաքում պարենամթերք ստացվելու մասին։ Դա հնարավորություն էր տալիս ուժեղացնելու բանվորական հսկողությունը սննդամթերքների բաշխման նկատմամբ։ Այդ հաղորդումներից, օրինակ, հայտնի է դառնում, որ դեկտեմբերի 19-ին և 20-ին ստացվել է 961 փութ ցորեն, 3562 փութ ալյուր, 1000 փութ ռաֆինադ շաքար, 1215 փութ կարտոֆիլ, 400 փութ կաղամբ, 450 փութ ձու, 1203 փութ բրինձ և այլն։ Սա շատ քիչ էր պահանջի դիմաց։ Այդ ժամանակ հանքերի բանվորներն ստանում էին կես ֆունտ հաց, այն էլ բացառապես գարուց։ Հույսը միայն Հյուսիսային Կովկասն էր։ Հենց այդ մասին էր գրում նահանգային պարենային վարչության նախագահ Բեկզադյանը Ստավրոպոլի պարենային վարչությանը. միակ հույսը ձեր վրա է, ուրիշ հույս չկա։ Բեկզադյանը հիշեցնում էր, որ Բաքվի պրոլետարիատը իր հերթին պարտքի տակ չի մնա. «Այսօր Ստավրոպոլ ենք ուղարկում... մարշրուտային գնացք նավթով, մանուֆակտուրայով, կաշվով և բրնձով։ Հավատում ենք և հույս ունենք, որ դուք կանեք ձեզնից կախված ամեն ինչ մեր խնդրանքը անհետաձգելիորեն կատարելու համար, քանի որ դրանից բացի ուրիշ փրկություն չկա»[12]։ Հյուսիսային Կովկասը փրկիչ էր ոչ միայն Բաքվի, այլ ամբողջ Անդրկովկասի, ողջ երկրի համար։ Նա այժմ՝ հեղափոխության հաղթանակից հետո ուժգնացած սովի պայմաններում, ստացել էր մի առանձին կարևորություն։ Վ. Ի. Լենինն անձամբ այնտեղ (մասամբ նաև Ուկրաինայի հացառատ շրջանները, որոնք, ցավոք սրտի, հակահեղափոխական տիրապետության տակ էին) ուղարկում էր ականավոր կազմակերպիչների, և նրանց հանձնարարում հացամթերքների գնման ու դրանք կարիքավոր վայրերն ուղարկելու գործը։

---

11 «Известия...», № 199, 2-ը դեկտեմբերի 1917 թ.։

12 Տե՛ս «Известия...», № 218, 25-ը դեկտեմբերի 1918 թ.։

Վարչությունը սկսում է հետևել, որ Հյուսիսային Կովկաս ժամանակին ուղարկվեն նավթամթերքները։ Դեկտեմբերի երկրորդ կեսին հանքային և գործարանային հանձնաժողովների պատգամավորների ու պարենային կոմիտեների ներկայացուցիչների համատեղ ժողովը հեռագրում է Թիֆլիս Շահումյանին և հարց դնում, որ նա օգնի Բաքու քաղաքի համար Հյուսիսային Կովկասում որևէ հացառատ գավառ առանձնացնելու գործին։ Սա շատ բնորոշ փաստ է։ Հայտնի է, որ այդ ժամանակ՝ դեկտեմբերի 21—22-ին Անդրկովկասում իշխանությունը իրենց ձեռքն էին վերցրել հակահեղափոխական կուսակցությունները։ Բանվորները նրանց չէին ուզում ճանաչել։ Ու թեև պաշտոնական իշխանություն հռչակված էր Անդրկովկասյան կոմիսարիատը, բանվորական դատի պաշտպանները, սնտեսելով կոմիսարիատը, դիմում էին բոլշևիկյան կուսակցության ներկայացուցիչ Ստեփան Շահումյանին, խնդրելով, որ նա՝ միջոցներ ձեռք առնի հացի խնդիրը լուծելու համար։ Կար նաև այլ պատճառ. հատկապես պարենային կոմիտեներում հակահեղափոխական կուսակցությունները ցույց էին տվել իրենց իսկական դեմքը, խայտառակել ու վարկաբեկել էին իրենց։ Տեսնելով դրության կրիտիկական լինելը, հացի խնդրի լուծման դժվարությունը, ձեռնարկված միջոցների ապարդյունությունը, նրանց ներկայացուցիչները հրաժարական էին տալիս և հեռանում պարենային օրգաններից։ Մինչդեռ բոլշևիկները, ճիշտ հակառակը, լարում էին իրենց ուժերը, աշխատում բարելավել պարենային կոմիտեների աշխատանքն ու բնակչության պարենային դրությունը։ Դեկտեմբերի 22-ին, հիշյալ ժողովի ժամանակ, նահանգային պարենային կոմիտեի պատասխանատու աշխատող բոլշևիկ Միքայել Աթաբեկյանը խոսքը ուղղելով բանվորական պատգամավորներին, ասում է. «...Մենք՝ նահանգային պարենային կոմիտեն, գոյություն ունենք միայն ձեզ հետ։ [Բավական է] ձեր անվստահությունը՝ և մենք բոլորս առանց բացառության կհեռանանք։ Նահանգային պարենային վարչությունը որոշել է մոտ կանգնել կյանքին, հեռանալ բյուրոկրատական մեքենայից» և այլն[13]։ Մինչդեռ էսեռները ձախողում էին գործը։ Բաքվի սովետի գործադիր կոմիտեի դեկտեմբերի նիստերից մեկում բոլշևիկ Բագրատ Բորյանը հրապարակում է, ինչպես ինքն էր ասում, մի տխուր փաստ. «Էսեռական կուսակցության կոմիտեի անդամներից մեկը իր կուսակցության անդամներին առաջարկել է չմասնակցել պարենային կազմակերպություններից և ոչ մեկի աշխատանքին»։ Խայտառակություն է այդ, ասում է նա, անթույլատրելի արարք. մարդիկ, որոնք աշխատում էին Գուչկովի և Միլյուկովի հետ, այժմ չեն ուզում աշխատել բանվորների հետ[14]։ Խորհրդակցությունը այդ փաստը դիտում է որպես դավաճանություն պրոլետարիատի գործին։

Հունվարի սկզբներին Բեկզադյանը մեկնում է Եկատերինոդար՝ մասնակցելու սովետների համագումարին։ Մինչև վերադարձը նրան փոխարինում է իր տեղակալ դոկտոր Գ. Մուսաբեկովը[15]։ Եկատերինոդարում Բեկզադյանը միջոցներ է ձեռք առնում Բաքու հացահատիկ և ալյուր ուղարկելու համար։ Վերադառնալով Բաքու, նա դարձյալ ուրախության լուր չբերեց։ Մարտին քաղաքի պարենային վիճակը շարունակում էր մնալ ամենավատթար վիճակում։ Մարտի 16-ին Բաքվի բոլշևիկյան կոնֆերանսը քննադատում է նահանգային պա-

13 «Известия...», № 216, 23 декабря 1917 г.

14 Նույն տեղում, № 219, 28-ը դեկտեմբերի 1917 թ.։

15 Նույն տեղում, № (8) 230, 1918 թ.։

բենային վարչության քաղաքականությունը այն բանի համար, որ հաստատված էր միայն հացի մենաշնորհ։ Մինչդեռ մասսայական սպառման մյուս բոլոր ապրանքները վեր էին ածվել սպեկուլյացիայի առարկայի։ Վիճակից դուրս գալու միակ ելքը, նշում է զեկուցողը՝ կենտրոնական պարենային կոմիտեի նախագահ Բագրատ Բորյանը, գործող պարենային կազմակերպությունների լիկվիդացումն է և նրանց ֆունկցիաները սովետին հանձնելը։ Կոնֆերանսը իր ընդունած բանաձևով անհրաժեշտ է համարում գոյություն ունեցող պարենային կազմակերպությունների վերացումը և պարենային ողջ գործի հանձնումը սովետի ձեռքը[16]։

Մարտի 22-ին պարենային հարցը քննարկման դրվեց Բաքվի սովետի նիստում։ Ալյոշա Ջափարիձեն հաղորդեց պարենային հարցի ուղղությամբ սովետի գործկոմի կիրառած միջոցների մասին։ Նա դեպուտատների ուշադրությունը բևեռեց պարենային հարցով զբաղվող մի շարք կազմակերպությունների գոյության փաստի վրա։ Բացի նահանգային և քաղաքային պարենային վարչություններից, ասում է նա, ստեղծվել է նաև սովետին կից պարենային հանձնաժողով, որից բացի սովետի գործկոմն էլ իր հերթին զբաղվում է պարենային հարցերով։ Ալ. Ջափարիձեն նույնպես խնդիր դրեց ստեղծել միասնական կազմակերպություն և պարենավորման ողջ գործը հանձնել սովետի ձեռքը։

Սովետի այդ նիստում նահանգի պարենային գործի աչքի ընկնող կազմակերպիչ բոլշևիկ Միքայել Աթաբեկյանի ներկայացրած նախագծի համաձայն ստեղծվում է սովետին ենթակա՝ պարենային դիրեկտորիա կոչված միասնական օրգանը։ Նրա ղեկավարության (կոմիտեի) կազմում մտնում են Մ. Աթաբեկյանը, Յուսուֆ Մելիքովը, Շիդա Հովհաննիսյանը, Կապլունովը և Ցիբուլսկին[17]։ Դիրեկտորիայի նախագահ հաստատվեց բոլշևիկ Մ. Աթաբեկյանը[18], որին հետո փոխարինեց ձախ էսեռ Ցիբուլսկին։ Սովետը մարտի 22-ի նիստում անհրաժեշտ է գտնում մթերման գործի հաջողության համար Հյուսիսային Կովկասում ունենալ հատուկ լիազոր։ Մայիսի 21-ին պարենավորման դիրեկտորիան վերակազմվեց պարենավորման գործերի ժողկոմատի։ Ժողկոմ նշանակվեց նույն ձախ էսեռ Իվան Ֆեոդորովիչ Ցիբուլսկին[19]։ Բայց հաջորդ ամսին պարենավորման ժողկոմի պոստը հանձնվեց սովետի նախագահ և ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ալ. Ջափարիձեին։

Բոլշևիկյան միջոցառումները սրանով չավարտվեցին։ Բաքվի և նրա շրջանների հեղափոխական պաշտպանության կոմիտեն նույնպես հանձն է առնում պարենային գործի բարելավման պարտավորություններ։ Այդ կոմիտեն ռազմա-հեղափոխական օրգան էր, որը միավորում և ղեկավարում էր Բաքվի շրջանների բոլոր սովետական կազմակերպությունների գործունեությունը։ Եվ հենց այդ կոմիտեի նախագահ Ստ. Շահումյանն էլ ղեկավարում էր ռազմահեղափոխական կոմիտեի պարենավորման և մատակարարման բաժինը։

Ստ. Շահումյանի կյանքին նվիրված բազմաթիվ գրքեր կան, բայց կենսագիրներից և ոչ մեկը խնդրի այս կողմի վրա պատշաճ ուշադրություն չի դարձրել։ Բանը միայն փաստը նշելը չէ։ Եվ ոչ էլ այն, որ ցույց տրվի, թե այդ

16 «Бакинский рабочий», № 50 (166), 19 марта 1918 г.
17 «Бакинский рабочий», № 56 (172), 1918 г.
18 «Հեղեկատու...», Բաքու, № 7, 1918։
19 Նույն տեղում, № 29, 1918։

պոստում ինչ է արել Ստ. Շահումյանը։ Գլխավորն այն է, որ բացահայտվի փաստի էությունը, թե ինչո՞ւ Ստ. Շահումյանին, կովկասյան բոլշևիկներից ամենահեղինակավորին, հանձնվում էր հենց պարենային գործով զբաղվող բաժնի ղեկավարությունը, և դրանից հետևություն արվի հեղափոխության բախտի համար պատմական կոնկրետ ժամանակում և պայմաններում պարենային հարցի խաղացած չափազանց կարևոր ղերի մասին[20]։

Ապրիլին Ստ. Շահումյանի նախագահությամբ ստեղծված Բաքվի և շրջանների սովետական իշխանության, ժողկոմխորհի առաջին միջոցառումներից մեկը եղավ Հյուսիսային Կովկասում հացամթերման և այնտեղից հացամթերքների տեղափոխման գործի կարգավորումը։ Ընդարձակվեց հսկիչ օրգանների ցանցը և ընդլայնվեցին նրանց իրավունքները։ Ստեղծվեց Հյուսիսային Կովկասում Բաքվի ժողկոմխորհի պարենային գծով հատուկ լիազոր-ներկայացուցչություն։ Ստ. Շահումյանի առաջարկով լիազոր ներկայացուցիչ նշանակվեց Ալեքսանդր Բեկզադյանը։

3. ՊԱՐԵՆԱՎՈՐՄԱՆ ՀԱՏՈՒԿ ԼԻԱԶՈՐ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ

Բաքվի համար հաց հայթայթելու աշխատանք էր տարվում Բաքվի Նահանգի գյուղերում, Հյուսիսային Կովկասում և Պարսկաստանում։ Նահանգի գյուղերն ու Պարսկաստանը որևէ հույս չէին ներշնչում։ Սակայն բոլշևիկները չէին թերագնահատում թե՛ մեկը, թե՛ մյուսը, բայց փրկության հիմնական երաշխիքը շարունակում էին տեսնել Հյուսիսային Կովկասում։ Անցյալում Բաքուն իր հացը միշտ ստացել էր Հյուսիսային Կովկասից։ Ադրբեջանական գյուղի արտադրած հացը բավարար չէր իր սեփական կարիքների համար անգամ։ Բայց ահա մարտյան քաղաքացիական կռիվներում Բաքվի պրոլետարիատի հաղթանակից և քաղաքում ու նահանգում իշխանությունը պրոլետարիատի ձեռքն անցնելուց հետո դադարեց պարենամթերքների փոխադրումը Հյուսիսային Կովկասից։ Պետրովսկում հաստատված հակահեղափոխական ուժերը կանգնեցրին Բաքվի գնացքները։

Գտնվելով Բաքվից հեռու, Բեկզադյանը պետք է իր ընկերներին, Բաքվի ողջ պրոլետարիատին ազատ գործելու պայմաններ ստեղծեր, հաղթանակի կարևոր երաշխիք։ Եվ արդեն մայիսի 2-ին Ջափարիձեն ֆաբրիկա-գործարանային կոմիտեների արտակարգ կոնֆերանսում հայտնում է, թե Հյուսիսային Կովկասում գնվել է 600—700 հազար փութ ալյուր[21]։ Բայց տեղափոխել հնարավոր չէ, քանի որ Բաքվի գնացքների առջև կանգնած է Պետրովսկի հակահեղափոխության պատնեշը։ Փորձ արվեց տեղափոխելու Ցարիցին-Աստրախան ճանապարհով, իսկ դա բավական դժվարությունների հետ էր կապված։

Հացի խնդիրը Բաքվի կոմունայի ղեկավարներին մղեց դեպի նոր գործողություններ, նրանց վարած քաղաքականության մեջ առաջ բերեց որոշ փոփոխություններ։ Դեռ դեկտեմբերի 9-ին Ստ. Շահումյանը մատնացույց էր անում Հյուսիսային Կովկասում Կալեդինի և Կարաուլովի բանդաներին ռազմա-

20 Բաքվի կոմունայի օրոք պարենային հարցի համեմատաբար մանրամասն գիտական շարադրանքը տրված է Լ. Խուրշուդյանի «Ստեփան Շահումյանի պետական և պարտիական գործունեությունը 1917—1918 թթ.» աշխատությունում։

21 «Տեղեկատու...», № 25, 1918։

կան ուժով վերջ տալու անհրաժեշտություն։ Սա Բաքվի պրոլետարիատին հուզող կենսական հարց էր, և ըստ էության նաև Բաքվի՝ հարց էր։ Ստ. Շահումյանը գտնում էր, որ ռազմական ուժը պետք է «անհապաղ շարժել Հյուսիսային Կովկասի վրա», և առաջարկում էր գործողությունների մի ամբողջ պլան, այն է՝ ամբողջ երկաթուղագիծը մինչև Ռոստով դնել հեղափոխական զորքերի պաշտպանության տակ, որը կապահովեր հացի հայթայթումը բանակի և թիկունքի համար[22]։

Բաքվի ժողկոմխորհը որոշ միջոցների դիմեց Հյուսիսային Կովկաս զինված ջոկատ ուղարկելու, մասնավորապես երկաթուղագծի վրա զինված պահակություն կարգելու համար։ Բայց դա միայն ամռան սկզբին։ Հետագայում, երբ կոմունայի դրությունը գնալով բարդանում էր, նա այդ հնարավորությունից նույնպես զրկվեց, բայց երկաթուղու հարցը օրակարգից չհանվեց։ Ընդհակառակը, հարց ծագեց Ղզլարից մինչև ծովափ՝ Ստարոտերեչնայա կամ Շենդրիկովյան նավամատույցները երկաթուղի անցկացնել, որպեսզի հնարավոր լիներ բեռները գոնե ծովով տեղափոխել։ Գծի երկարությունը մոտ 65 կիլոմետր էր լինելու։ Դրանից հետո պետք էր նավակներով բեռները մոտ 15 կմ տեղափոխել մինչև ծովի խորքը՝ ուր կարող էին շոգենավեր մոտենալ։

Գնած հացահատիկն ու ալյուրը, մյուս պարենամթերքները Բաքու ուղարկելու ճանապարհ որոնելիս Բեկզադյանը նույնպես ամենահարմար միջոցը այդ էր համարում։ Եվ նա էլ իր հերթին Հյուսիսային Կովկասում դիմեց միջոցների։ Այդ նպատակով Բաքվից ուղարկվեց հատուկ տեխնիկական հանձնաժողով[23] և պարզվեց, որ, իրոք, եղած բոլոր հնարավոր տարբերակների մեջ ամենից գործնականն այդ էր։ Իսկ կատարելու համար պահանջվող միջոցները Բաքվի ժողկոմխորհի համար տվյալ պահին բավական շատ էին և փաստորեն այդ նախագիծը անհնար եղավ իրականացնել։ Նորից ծառացավ Գրոզնի—Խասավ-Յուրտ երկաթուղագիծը վերականգնելու հարցը։ Գործին նպաստեց 1918 թվականի սկզբին Թերեքում բոլշևիկների գլխավորությամբ ժողովրդական իշխանության հաստատումը։ Բեկզադյանն անձամբ հանդիպեց նրանց ղեկավարների հետ, բանակցեց և միջոցներ մշակեց։ Եթե Հյուսիսային Կովկասում հացի խնդիրը սոսկ մի քաղաքի՝ Բաքվի ու նրա շրջանների հարց չէր, ապա պետք է նշել, որ Հյուսիսային Կովկասի և Բաքվի միջև կապ հաստատելու համար երկաթուղագծի Խասավ-Յուրտ—Պետրովսկ հատվածի վերականգնումը ոչ միայն համաանդրկովկասյան և համակովկասյան, այլև համառուսաստանյան նշանակություն ուներ։ Այդ հարցով ամենայն ուշադրությամբ զբաղվում էր ժողկոմխորհը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։ Կենտրոնական իշխանությունը միջոցներ էր ձեռք առնում, որպեսզի հաջող ընթանան Հյուսիսային Կովկասում Բաքվի համար պարենամթերքների գնումները։ Ժողկոմխորհի նախագահության ցուցումով Հյուսիսային Կովկաս Ալ. Բեկզադյանին է ուղարկվում մանուֆակտուրա հացամթերքների հետ փոխանակելու համար։ Հիշատակենք, որ ռուբլու արժեքը շատ էր ընկել և Բեկզադյանը գնում էր մեծ մասամբ փոխանակությամբ։ 1918 թ. մայիսի 28-ին ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը հայտնում է Ստ. Շահումյանին, որ Բեկզադյանի տրամադրության

---

22 Տե՛ս Ստ. Շահումյան, երկեր, հ. 3, էջ 28։

23 Я. Ратгаузер. Революция и гражданская война в Баку, ч. I, 1917—1918 гг. Баку, 1927, стр. 181—182.

տակ Մինեբալնի են ուղարկված մանուֆակտուրային ապրանքներ[24]։ Դրանից մի քանի օր հետո, Ատալինը Ցարիցինից դարձյալ հեռագրում է Շահումյանին, որ ինքը շուտով լինելու է Հյուսիսային Կովկասում և հավաստիացնում է, որ «Խասավ-Յուրտ—Պետրովսկ գիծը կսարքվի ինչ գնով ուզում է լինի»[25]։

Բայց հետագա գործողություններն այնպես ընթացան, որ Հյուսիսային Կովկասում հակասովետական խռովությունները կասեցրին այդ պլանի իրագործումը։ Դենիկինի բանակը ընդհուպ մոտեցավ Եկատերինոդարին։ Անհնար դարձավ ոչ միայն երկաթգծի կառուցումը, այլև երկաթուղային երթևեկությունը։ Մինչ այդ, չնայած բոլոր դժվարություններին, Ալ. Բեկզադյանը ամեն կերպ աշխատեց կատարել իր վրա դրված պարտականությունները։

Բեկզադյանը քսան հոգուց բաղկացած իր հիմնարկով Հյուսիսային Կովկաս էր մեկնել դեռևս 1918-ի փետրվարին։ Սկզբում նա կոչվում էր Բաքվի համար հացամթերումների հատուկ լիազոր։ Հետագայում՝ ԺողկոմխորՀն ստեղծվելուց հետո, նա ստացավ Ստ. Շահումյանի ստորագրությունը կրող մանդատ, որը հաստատում էր նրա՝ Հյուսիսային Կովկասում Բաքվի ԺողկոմխորՀի հատուկ լիազորի պաշտոնը։

Փետրվարի 18-ին Բեկզադյանը Մինեբալնիե Վոդում կազմակերպում է իր բազան։ Նա իր հետ այնտեղ էր տարել մի քանի վագոն շաքար, մի քանի վագոն մանուֆակտուրա, նաև բրինձ և այլ մթերքներ փոխանակությամբ գնումներ կատարելու համար։

Բեկզադյանի ղեկավարած հիմնարկը ուներ իր ներկայացուցիչները Ստավրոպոլում, Գեորգիևսկում, Եկատերինոդարում, որտեղ նրանք գնած հացահատիկը ուղարկում էին Մինեբալնիե Վոդի—Գուդերմես—Բաքու գծով։ Բայց երբ չեչենական հակահեղափոխական ուժերը հարձակվեցին և քանդեցին երկաթուղագիծը Գուդերմեսի ու Խասավ-Յուրտի միջև, ջարդեցին հացով բեռնված վագոնները, այդ պահից կտրվեց Բաքվի հետ երկաթուղային կապը։ Բեկզադյանը հարց բարձրացրեց բեռները փոխադրել Ջերվլենկո հանգուցային կայարանից մինչև Ղզլար կայարան տանող երկաթուղային ճյուղով։ Ղզլարը գտնվում էր ծովից գրեթե 90 կմ հեռավորության վրա։ Բեկզադյանը խնդիր դրեց՝ շուտափույթ կերպով Ղզլարից մինչև ծովափնյա Ստարոտերեչնայա ձրկնորսական ավանը նոր գիծ կառուցել։ Այս հարցը Բաքվում ևս հավանություն գտավ։ Սկսվեցին գծի անցկացման աշխատանքները։ Մինչև գիծը կկառուցվեր, հացը Ղզլարից սայլերով փոխադրում էին Ստարոտերեչնայա նավամատույցը, որտեղ հանձնում էին Բաքվից եկող շոգենավերին։ Բայց այստեղ էլ շոգենավերը չէին կարողանում մոտենալ ափին։ Ծովը ծանծաղ էր։ Ստիպված էին նավակներով ու մակույկներով հասցնել մինչև շոգենավերը[26]։ Այդպես էլ բավարարվեցին փոխադրման միայն այս՝ բավական դժվարին ու տանջալի եղանակով։

Գնման և փոխադրման ընթացքի մասին Բեկզադյանի ղեկավարած ապարատը տեղեկացնում էր Բաքվի ԺողկոմխորՀին։ Դրան մեծ կարևորություն էր տալիս Ստ. Շահումյանը։ Մայիսի 10-ին ԺողկոմխորՀը պարենային դիրեկ-

---

24 Տե՛ս «Большевики...», էջ 438։

25 Նույն տեղում, էջ 481։

26 Այդ մասին տե՛ս С. Шаумян, Бак. коммуна, էջ 39—40։ Այդ մասին մեզ պատմել է նաև Հս. Կովկասում Ալ. Բեկզադյանի օգնականը՝ 1917 թվականից ՍՄԿԿ անդամ Հ. Գ. Հակոբյանը, որն այժմ ապրում է Ուֆայում։

տորիային կարգադրեց մամուլում սիստեմատիկաբար հաղորդել հացի գնման, փոխադրման վիճակի մասին։ Այդ կապակցությամբ Հյուսիսային Կովկասի ներկայացուցչությունում ստեղծվեց ինֆորմացիայի բաժին, որը ղեկավարում էր Փ. Կնունյանցը։ Նա մինչև այդ, այսինքն՝ մինչև 1918 թ. մայիսը, Բաքվում պրոլետարական սննդակետերի վարիչ էր[27]։

Բաքվի սովետը, պարենային դիրեկտորիան մշտական կապ էին պահպանում Բեկզադյանի հետ։ Ապրիլին նրա մոտ եկավ պարենային դիրեկտորիայի նախագահ Միքայել Աթաբեկյանը[28]։ Ժողկոմխորհը մշտապես հոգում էր, որպեսզի Բեկզադյանի տրամադրության տակ լինի բավարար քանակությամբ նավթ՝ փոխանակման համար[29]։ Բեկզադյանի հետ կապ է հաստատում Սովետական Ռուսաստանի ժողկոմխորհի 1918 թ. մայիսի 31-ի որոշմամբ հարավ եկած Ի. Ստալինը։ Նա նշանակված էր Ռուսաստանի հարավում պարենային գործի ընդհանուր ղեկավար, որին տրված էին արտակարգ իրավունքներ, ինչպես ասվում էր այդ առթիվ Ստալինին տրված Լենինի ստորագրություն կրող մանդատում։ Ըստ այդ մանդատի, տեղական ժողկոմխորհները, սովետները ու հեղկոմները, երկաթուղային, առևտրական, գետային ու ծովային նավատորմի և պարենավորման գործով զբաղվող բոլոր կազմակերպությունները պարտավոր էին ենթարկվել Ստալինի կարգադրություններին[30]։ Սա վերաբերում էր նաև Բեկզադյանին, որի հետ կապվում է Ստալինը Ցարիցին գալուց անմիջապես հետո։ Այդ ժամանակ Հյուսիսային Կովկասում մթերումներ էր կատարում նաև Սովետական Ռուսաստանի պարենային արտակարգ կոմիսարը։ Բայց վերջինիս գործերը լավ չէին, քանի որ նա եկել էր միայն թղթադրամով, և չէր հաջողվում գնումներ կատարել։ Թղթադրամը արժեզրկվել էր և գյուղացիները նրանով հաց չէին վաճառում։ Մինչդեռ Բեկզադյանը հաջողությամբ գնումներ էր կատարում փոխանակությամբ։ Հյուսիսային Կովկասում Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը դիմում է Ստալինին, իր անհաջողությունը պատճառաբանելով նրանով, որ Բեկզադյանը գնում է փոխանակման միջոցով և դրանով իբր խափանում իր գործը։ Ստալինը, սկզբում գործին անտեղյակ, փորձում է պահանջել Բեկզադյանից, որ նա նույնպես գնումները դրամով կատարի, բայց երբ Բեկզադյանը բացատրում է բանի էությունը, վեճը հարթվում է[31]։

Եվ այսպես Բեկզադյանի գնումներով մոտ 550 վագոն հացահատիկ է կուտակվում Հյուսիսային Կովկասում, բայց մեծ դժվարությամբ դրա շատ քիչ մասն է միայն ուղարկվում Բաքու։ Մինչդեռ Բաքվում սովի ոսկրոտ ձեռքն էր տեսնում իր գործը։ Պարենավորման ժողկոմ Ի. Ֆ. Ցիբուլսկուն Ալյոշա Ջափարիձեով փոխարինելը դարձյալ վիճակը չփոխեց։ Իսկ կոմունան շրջափակման մեջ էր։ Մի կողմից թուրքական զորքերն էին սպառնում, մյուս կողմից անգլիացիներն էին ձգտում դեպի Բաքու։ Ներսում կատաղի քաղաքացիական կռիվներ էին և սով։ Ժողկոմխորհը ուժեղացնում է սննդամթերքների բաշխման և վաճառքի նկատմամբ հսկողությունը։ Իսկ էսեռներն ու մենշևիկները

---

27 Տե՛ս ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 124, ց. 1, գ. 1611, թթ. 7—8։

28 Տե՛ս «Տեղեկատու», № 7, 1918։

29 Տե՛ս Ադր. ՍՍՀ ՀՍՀ ԿՊԱ, ֆ. 11, ց. 1, գ. 175, թ. 27։

30 Տե՛ս Վ. Ի. Լ ե ն ի ն, Երկեր, հ. 27, էջ 520։

31 Այս մասին հիշում է Հս. Կովկասում Ալ. Բեկզադյանի օգնական Հ. Գ. Հակոբյանը։

չարաշահում են այդ միջոցառումները։ Նրանք վայնասուն բարձրացրին սպեկուլյացիան կանխելու նպատակով քաղաքում մասնավոր գնումները արգելելու դեմ։ Սոված բանվորները մասնավոր գնումների արգելման դեմ էսեռամենշևիկյան ագիտացիայի ազդեցության ներքո չէին կատարում պրոլետարական իշխանության որոշումը և շարունակում էին մասնավոր գնումներն ու առևտուրը։ Սա ցնցող երևույթ էր, ձեղքվածք Կոմունայի մեջ։ Ստ. Շահումյանը գրում է. «Բանվորները սովի են մատնված, իսկ սովը վատ խորհրդատու է», ավելացնելով, որ թշնամիները, օգտվելով հանգամանքից, «քաղցած ու ջղայնացած բանվորներին գրգռում են իրենց ընտրովի կազմակերպությունների դեմ, սովետական իշխանության դեմ»[32]։

Բաքվի կոմունայի անկումից հետո Հյուսիսային Կովկասում պարենային գծով նրա լիազոր-ներկայացուցչությունը դադարեցրեց իր գործունեությունը։ Բեկզադյանի ղեկավարությամբ կազմվեցին հաշվետվություններ, մնացած գումարները հանձնվեցին սովետական իշխանության ներկայացուցիչներին։ Բաքվի կոմունային պատկանող գույքը փոխադրվեց Վլադիկավկազ։

32 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 169։